



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

10th November 2019

Bulletin 45/2019

Ninth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՍԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ5:15-33

Ուրեմն գգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցութեամբ. ո՛չ թէ անխոհեմներու պէս, հապա՛ իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը, որովհետեւ օրերը չար են: Ուստի անմիտ մի՛ ըլլաք, հապա հասկցէ՛ք թէ ի՛նչ է Տէրոջ կամը: Մի՛ արբենաք գինիով՝ որուն մէջ անառակութիւն կայ, հապա Հոգիով լեցուցէ՛ք: Սաղմոսներով, օրհներգերով եւ հոգեւոր երգերով դուք ձեր մէջ խօսակցելով երգեցէ՛ք ու սաղմո՛ս ըսէք Տէրոջ ձեր սիրտերուն մէջ: Ամէն ատեն՝ ամէն բանի համար շնորհակա՛լ եղէք Աստուծմէ՛ եւ Հօրմէն, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով: Իրարու հպատակեցէ՛ք Աստուծոյ վահով:

Կիներ, հպատակեցէ՛ք ձեր ամուսիններուն՝ որպէս թէ Տէրոջ. որովհետեւ ամուսինը կնոջ գլուխն է, ինչպէս Քրիստոս ալ եկեղեցիին գլուխն է, եւ ինքն է մարմինին Փրկիչը: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին հպատակ է Քրիստոսի, նոյնպէս ալ կիները թող ըլլան իրենց ամուսիններուն՝ ամէն բանի մէջ:

Ամուսիններ, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս Քրիստոս ալ սիրեց եկեղեցին եւ ընծայեց ինքզինք անոր համար, որպէսզի սրբացնէ՛ զայն ու մաքրէ՛ ջուրի լուացումով՝ խօսքին միջոցով. որպէսզի ներկայացնէ՛ զայն իրեն՝ իբր փառաւոր եկեղեցի մը, որ չունենայ բիծ, կամ կնճիռ, կամ նման որեւէ բան, հապա ըլլայ սուրբ եւ անարատ: Նոյնպէս ալ ամուսինները պարտաւոր են սիրել իրենց կիները՝ իրենց մարմիններուն պէս. ան որ կը սիրէ իր կինը՝ կը սիրէ ինքզինք: Արդարեւ ո՛չ մէկը երբեք ատած է իր մարմինը, հապա կը կերակրէ՛ զայն ու կը փայփայէ, ինչպէս Տէրն ալ՝ եկեղեցին. քանի որ մենք անոր մարմինին անդամներն ենք, անոր միսէն եւ անոր ոսկորներէն: “Ատոր համար մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէկ մարմին”: Ասկա մեծ խորհուրդ մըն է. բայց ես կը խօսիմ Քրիստոսի եւ եկեղեցիին մասին: Սակայն ձեզմէ իւրաքանչիւրը թող սիրէ իր կինը այնպէս՝ ինչպէս ինքզինք, ու կինը թող ակնածի իր ամուսինէն:

The Epistle of St Paul to the Ephesians 5:15-33

Be very careful, then, how you live—not as unwise but as wise, making the most of every opportunity, because the days are evil. Therefore do not be foolish, but understand what the Lord’s will is. Do not get drunk on wine, which leads to debauchery. Instead, be filled with the Spirit, speaking to one another with psalms, hymns, and songs from the Spirit. Sing and make music from your heart to the Lord, always giving thanks to God the Father for everything, in the name of our Lord Jesus Christ.

Instructions for Christian Households

Submit to one another out of reverence for Christ.

Wives, submit yourselves to your own husbands as you do to the Lord. For the husband is the head of the wife as Christ is the head of the church, his body, of which he is the Saviour. Now as the church submits to Christ, so also wives should submit to their husbands in everything.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God’s children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Husbands, love your wives, just as Christ loved the church and gave himself up for her to make her holy, cleansing ² her by the washing with water through the word, and to present her to himself as a radiant church, without stain or wrinkle or any other blemish, but holy and blameless. In this same way, husbands ought to love their wives as their own bodies. He who loves his wife loves himself. After all, no one ever hated their own body, but they feed and care for their body, just as Christ does the church—for we are members of his body. “For this reason a man will leave his father and mother and be united to his wife, and the two will become one flesh.” ³ This is a profound mystery—but I am talking about Christ and the church. However, each one of you also must love his wife as he loves himself, and the wife must respect her husband.

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:49-57

Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովարանի պետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, ա՛յ մի՛ անհանգստացնէր վարդապետը»: Բայց երբ Յիսուս լսեց ասիկա՝ ըսաւ անոր. «Մի՛ վախնար, միա՛յն հաւատա, ու պիտի ապրի»: Երբ տունը մտաւ, ո՛չ մէկուն թոյլ տուաւ որ մտնէ, բայց միայն՝ Պետրոսի, Յակոբոսի ու Յովհաննէսի, եւ աղջիկին հօր ու մօր: Բոլորն ալ կու լային եւ կը հեծեծէին անոր վրայ. բայց ինք ըսաւ. «Մի՛ լաք. ան մեռած չէ, հապա կը քնանայ»: Անոնք ալ զինք ծաղրեցին, քանի զիտէին թէ մեռաւ: Իսկ ինք բոլորն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն, ու գոչեց՝ ըսելով. «Աղջի՛կ, ոտքի՛ ելիր»: Անոր հոգին վերադարձաւ, եւ ան անմիջապէս կանգնեցաւ: Յիսուս հրամայեց՝ որ անոր ուտելիք տան: Անոր ծնողները զմայլած մնացին, եւ ինք պատուիրեց անոնց՝ որ պատահածը ո՛չ մէկուն ըսեն:


The Holy Gospel of Jesus Christ according to Luke 8:49-57

While Jesus was still speaking, someone came from the house of Jairus, the synagogue leader. “Your daughter is dead,” he said. “Don’t bother the teacher anymore.”

Hearing this, Jesus said to Jairus, “Don’t be afraid; just believe, and she will be healed.”

When he arrived at the house of Jairus, he did not let anyone go in with him except Peter, John and James, and the child’s father and mother. Meanwhile, all the people were wailing and mourning for her. “Stop wailing,” Jesus said. “She is not dead but asleep.”

They laughed at him, knowing that she was dead. But he took her by the hand and said, “My child, get up!” Her spirit returned, and at once she stood up. Then Jesus told them to give her something to eat. Her parents were astonished, but he ordered them not to tell anyone what had happened.



Jairus' Daughter Restored to Life

Հրեշտակապետեր Գաբրիելի և Միքայելի և ողջ երկնային գործի հիշատակության օր

Հայ եկեղեցու հրեշտակաբանության համաձայն՝ հրեշտակներն անմարմին հոգիներ են՝ իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անսեռ, անմահ և սպասավոր Աստծուն: Ըստ եկեղեցու սուրբ հայրերի՝ հրեշտակները, իբրև լուսեղեն էակներ, ստեղծվել են արարչագործության առաջին օրը՝ լույսի հետ միասին: Աստծո հրահանգով նրանք կոչված են սպասավորելու մարդ արարածին: Հետևաբար նրանք սպասավոր հոգիներ են, որոնք երկնաբնակ լինելով հանդերձ, իրենց մասնակցությունն են բերում նաև երկրավոր կյանքի ընթացքին, գործում են ժամանակի և տարածքի մեջ ապրող մարդու հետ, մարդու համար: Հրեշտակներին անվանում են նաև Աստծո պառզամավորներ, ովքեր մեզ են փոխանցում Տիրոջ կամքը: Ս. Գիրքը վկայում է, որ նրանք բազմաքանակ են: Ըստ Ս. Դիոնիսիոս Արիսպագացու՝ հրեշտակներն ունեն ինը դաս՝ Աթոռներ, Քերովբեներ, Սերովբեներ, Տերություններ, Չորություններ, Իշխանություններ, Պետություններ, Հրեշտակապետեր և Հրեշտակներ:

Գաբրիել անունը, որ նշանակում է «Աստծո այր», Բարձրյալի անմիջական պաշտոնյան է, որին վերապահված է Տիրոջ վերին խորհուրդներն ավետարանելու շնորհ: Այս հրեշտակապետը, որ ուղարկվել էր Տիրոջ կողմից, Ս. Կույս Մարիամին բարի լուրը հաղորդեց, իսկ Չաքարիային՝ Ս. Հովհաննես Մկրտչի ծննդյան ավետիսը:

Միքայել անունը, որ նշանակում է «Ո՛վ է Աստծուն նման», Երկնավոր Արքայի փառքի և նրա ժողովրդի պաշտպանության համար մարտնչողն է, որին տրված է կառավարելու և թագավորելու շնորհ: Միքայել հրեշտակապետի անունը չորս անգամ վկայակոչված է Ս. Գրքում (Դան. Ժ 13, ԺԲ 1, Հուդ. Ա 9, Հայտ. ԺԲ 7):

Commemoration of Archangels Gabriel and Michael and the Entire Heavenly Class

According to the Angelology of the Armenian Church the angels are unfleshly, spiritual, independent, always moving, asexual, immortal creatures and God's servants. According to Church Fathers, the angels, as luminous creatures, have been created the first day of Creation, together with the light. By the God's order they are servants, they have been created to serve the human being. Therefore, they are servants who despite their being dyophysite, participate in the earthly life, act together with the human being living in time and space, they act for the human being. The angels are called the messengers and agents of God, who realize God's will. According to Dionysius of Areopagus (Areopagite), there are nine orders of angels – Angels, Archangels, Virtues, Powers, Principalities, Dominations, Throne, Cherubim and Seraphim.

Archangel Gabriel, whose name means "God's man", is God's direct servant, who is granted the grace to evangelize the Lord's mysteries. It was Archangel Gabriel, who was sent by the Lord to bring the good news to the Virgin about the birth of the Savior, and to Zechariah – to bring the good news about the birth of John the Baptist.

Archangel Michael, whose name means "Who is like God?", is the advocate for the Heavenly King's glory and His people's protection, who is granted the virtue to govern and rule. The name of Archangel Michael is mentioned in the Holy Scriptures for four times (The Book of Daniel, 10:13, 12:1, The Letter from Jude 1:9, The Revelation to John 11:7).

2019 Christmas Raffle

St Yeghiche Armenian Church is launching its 2019 Christmas Raffle ticket sale in order to raise much needed funds for helping out and activities for charitable purposes. Please support our Ladies at this festive season and secure your tickets for worthy causes. There are nice prizes and the draw is marked for 6th January 2020.



You may also call church office no. 020 7373 8133 or approach the Church Desk on Sundays where Parish Council Members will be happy to reply to your questions and provide you with raffle tickets.

Thank you in advance for your continued support to St Yeghiche Armenian Church Parish.

Armenian Christmas 2020, Lunch,

As customary St Yeghiche Armenian Church Ladies Guild will be organising Christmas lunch on 6th January 2020 after church service. Venue and details will be informed shortly. Kindly reserve the date for traditional Armenian Family Celebration. Raffle draw will take place during the event. Thank you.

St Yeghiche Armenian Church Parish Council.

Pilgrimage to Holy Land and Jerusalem

Under the auspices of the Diocese of the Armenian Church of UK, pilgrimage to the Holy Land and Jerusalem is being organised from 16th -24th January 2020. Join us and follow our Lord's steps in various locations where he preached for the salvation of MANKIND. For further details please contact Church office on 020 7373 8133 or approach the Church Desk on Sunday where Parish Council Members will be happy to reply to your questions and provide vital information. *Thank you in advance for your continued support to St Yeghiche Armenian Church Parish.*

St Yeghiche Armenian Church Christmas Tree

We will be erecting our Christmas tree and Nativity scene on Sunday 1st December 2019 after church service. We invite all the children in our community with their parents to join us and our Deacons to decorate our 2019 Christmas Tree. Please bring wrapped empty boxes of any size to fill under the Christmas tree.

Thank you.

3: This weeks message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Լաց մի եղէք, որովհետեւ մեռած չէ, այլ ննջում է»: Իսկ նրանք ծաղրում էին նրան, քանի որ գիտեին, որ մեռած էր» (Ղուկ. 8:52-53):

Քրիստոսով զօրացող եղբայրներ եւ քոյրեր,

Շատ յաճախ է պատահում, որ երբ ավետարանական հատուած է ընթերցում, մարդիկ, այսօրուայ հետ կապը չը գտնելով, կարծում են, որ Աւետարանը միայն անցեալի մասին է, այսօրուայ մեր հարցերին չի կարող պատասխանել եւ պնդում են, որ նոր ժամանակների խնդիրների համար նոր լուծումներ են պետք: Բայց ինչպէս վերը բերուած հատուածի մէջ է երեւում, իրավիճակի մասին մեր եւ Աստծոյ գնահատականները կարող են տարբեր լինել, ակնհայտ է, որ ակնհայտ է իրար:

Մեր ժամանակների թե՛ ընտանեկան, թե՛ ազգային ու հասարակական եւ թե՛ հոգեւոր հիւանդութիւնների ու խնդիրները լուծումը մենք ունենք Աստծոյ եւ Իր խօսքի մէջ, մահուան հիւանդութիւնը բուժող Փրկչի մէջ: Գիտական եւ տրամաբանական էին ժողովրդի խօսքերն ու մտածումները, որ այլեւս մեռած է աղջիկը եւ անհնար է որեւէ բան անել, ակնհայտ է ծիծաղելի է մահացածին ողջ կոչել: Մենք լաց ենք լինում, այլ իմաստով ցաւում ենք, ողբ եւ կոծ անում մեր մարմնական վիճակի համար՝ մինչեւ վերջ չը գիտակցելով, որ իրապէս առաւել վտանգաւոր է հոգու հիւանդ վիճակը, որ կարող է մահուան տանել: Որքա՞ն շատ մարդիկ այժմ առանձնանալ եւ մենակ մնալ են ուզում վատ լուր առնելիս եւ որքան կարեւոր է, որ այդ պահին իրենց հոգեւոր խողովակները Քրիստոսի ձայնը լսեն. *«Մի՛ վախեցիր, միայն հաւատա՛ »* (Ղուկ. 8:50), աղօթքով Աստծոյ հետ լինեն, Իր ներկայութեան մէջ եւ տեսնեն վերականգնումը, բժշկումը, յարութիւնը:

Սա այն գեղեցիկ դրուագներից է, երբ երեւում է Աստծոյ սերն ու գթառատ վերաբերմունքը բոլոր կարիքն ունեցող եւ հաւատով սպասողների նկատմամբ: Աղջկայ հայրը Քրիստոսից միայն բժշկութիւն էր խնդրում՝ երբեւէ գուցէ չմտածելով, որ իր աղջեւ Մէկն է, ով կարող է կեանք տալ: Երբ լուր եկաւ, որ աղջիկը մեռած է այլեւս, լուր բերողն անգամ խորհուրդ է տալիս թողնել Քրիստոսին, չհոգնեցնել նրան: Սա կարուեր ցանկացած բժշկի դէպքում էլ, երբ նա գալիս է բժշկելու, բայց ճանապարհին յայտնում են, որ հիւանդը մահացել է, եւ բժիշկն այլեւս անելիք չունի: Հայրը չխնդրեց Յիսուսին, որ Նա յարութիւն տա, մահուանից հետ կանչի մանկան հոգին: Իրականում Աստծուն մեր խօսքերի փոխարէն մեր սիրտն է պետք, անվերապահ հաւատացող հոգին, վստահութիւնը՝ ընդունելու Իր կամքը, քան մերը: Դրա համար Աստուած ըստ սրտի եւ հաւատքի է, առանց խօսքի ու խնդրանքի տալիս է, քանի որ *«գիտէ, թէ ինչ է ձեզ պետք, նախքան որ դուք նրանից մի բան ուզէք»* (Մատթ. 6:8):

Ե՛ւ մանկան մահուան լուր բերող մարդը, ե՛ւ տանն արդեն հաւաքուած սգաւորների խումբը, ըստ մարդկային մեր չափանիշերի, ճիշտ էին, երբ մանկանը մահացած էին կոչում, իրենք ճիշտ էին՝ ըստ մարդկային փորձառութեան եւ գիտելիքի, բայց Քրիստոս ցոյց է տալիս բոլորովին այլ իրականութիւն՝ Աստծոյ չափանիշը. ուր ներկայ է կեանք տուող Աստուած, այնտեղ պարտում է միշտ յաղթող թուացող մահը. (Հմմտ. *«Ո՞ւր է, մա՛հ, քո յաղթութիւնը»* (Ս. Կորնթ. 15:55):

Աղօթել սովորեցնելու ուսուցումի մէջ էլ Տէրը պատուիրում է փակել դուռը դրսի աղմուկների, տրամաբանական թուացող, բայց այս աշխարհից եկող մարդկային փորձառութեան պնդումների առաջ: Այդժամ մենք լսելու համար երկնքից եկող *«Մի՛ վախեցիր, միայն հաւատա՛ »* աստուածային քաջալերանքն ու յուսառատ խոստումը:

Մարդկային մեր կեանքում շատ յաճախ է պատահում, որ այդպես էլ լաւ ու գեղեցիկ շատ գաղափարներ կեանքի չեն կոչուում, չեն իրագործուում մարդկանց խօսքերի ու կարծիքների պատճառով, ուրիշների փորձառութեան եւ սխալ խորհուրդների ազդեցութեամբ: Հիւանդ աղջկայ հօր կերպարի մէջ մեզ պետք է գա Քրիստոսից չբաժանուելու, այդ ծանր իրավիճակում մանաւանդ Տիրոջ կողքին լինելու օրինակը: Դրա համար նոյնիսկ ամենափոքր գործի մէջ առաքեալը ոչ թէ սեփական գիտելիքի վրայ պարծեանլու, այլ Աստծուն կանչելու, Տիրոջ կամքն ու առաջնորդութիւնը խնդրելու կոչ է անում. *«Մինչդեռ դուք ասելու էք. «Եթէ Տէրը կամենայ, եւ ապրենք, կանենք այս կամ այն բանը»* (Յակբ. 4:15):

Աստծոյ ձայնը լսելու համար աշխարհից եկող աղմուկը դադարեցնել եւ լռեցնել է պետք: Պարագաներ կան, երբ մենք ենք մարդկանց թողնում՝ Աստծոյ հետ լինելու համար: Պատահական չէ, որ յաճախ Ինքը՝ Քրիստոս, օրինակ տալով մեզ, աղօթքի համար առանձնանում էր՝ կարծես իլացնել ուզելով աշխարհից եկող աղմուկը: Դէպքեր կան, որ ոչ թէ մենք պետք է հեռանանք, այլ մեր կեանքից կամ միջավայրից պիտի հեռացնենք աշխարհի աղմուկը փոխանցող մարդկանց: Աղջնակի յարութեան այս դրուագում մենք տեսնում ենք, որ Յիսուս *«ամենքին դուրս հանելով՝ բռնեց նրա ձեռքից, գոչեց եւ ասաց. «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՛վ մանուկ»: Եւ նրա հոգին վերադարձաւ, եւ մանուկը իսկոյն կանգնեց»*(Լուկ. 8:54-55):

Փոքրաթիւ մարդիկ՝ առաքեալները եւ մանկան ծնողները միայն ներկայ եղան մանկանը յարութիւն տալու դրուագին: Իսկ նրանք, որոնք Քրիստոսի խօսքերը անլուրջ ընդունեցին եւ ծաղրեցին, իրենց կողմից մեռած կոչուածին յարութիւն առած տեսան:

Այժմ աշխարհն ու մարդիկ ինքնավստահօրէն իրենց փորձառութիւնն ու գիտելիքն են յայտարարում բացարձակ եւ ճշմտարիտ՝ յաճախ ծաղրելով հոգեւոր խօսքն ու փորձառութիւնը: Մեզանից է կախուած՝ ո՞ր խմբի մէջ կը լինենք՝ ծաղրողների՞, թէ Քրիստոսի հետ եղողների եւ հրաշքի ականատեսների: Եկեղեցին Քրիստոսի խորհրդական մարմինն է, ուր շարունակուում է Քրիստոսի գործը:

Եկէք մենք էլ, առաքեալների եւ մանուկի ծնողների պէս աշխարհի աղմուկը մի կողմ թողնելով, հաւատանք ու քայլենք Քրիստոսի հետ, որ Կեանք է, Յարութիւն, Ճանապարհ եւ Ճշմարտութիւն, Ում Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Book Presentation

Under the auspices of HG Bishop Hovakim Manoukyan a new book written by Dr Hrair Jebedjian under the title “Armenian Diaspora Life as Witnessed” will be presented at Bishop’s House on Nov 15th 2019 starting at 7:00 pm. All welcomed.

3: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Armenian Community in United Kingdom and St Yeghiche Armenian Church Parish for the soul of **All the Soldiers and Members of the Public who fell during the WW1 and WW2 wars.**

By Mr and Mrs Hrach and Ramela Ghazarian and Family for the soul of their Father and Grandfather the late **MATHEIOS GHAZARIAN (ՄԱԹԷՈՍ ԴԱԶԱՐԵԱՆ)**, on the 12TH anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the GHAZARIAN Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Զաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Զահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.